ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

ի պատասխան Ձեր 22.02.2024թ. հ. 14/02 գրության՝ տեղեկացվում է.

01.01.2024-31.01.2024թթ. ժամանակահատվածի համար այլ վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը «Ա» և «Բ» գոտիներում կայանելու համար համապատասխան եկամտային հաշիվներին փոխանցվել է ընդամենը 593.433.310 ՀՀ դրամ գումար: «Ա» գոտում կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է շուրջ՝ 3217, ամսական դրույքաչափով շուրջ՝ 1685, շաբաթական՝ շուրջ 830 և օրական՝ շուրջ 1620 ավտոտրանսպորտային միջոցների համար վճարումներ: «Բ» գոտում կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է շուրջ՝ 3615, ամսական՝ 440, շաբաթական՝ շուրջ 103 և օրական՝ շուրջ 385 ավտոտրանսպորտային միջոցների համար վճարումներ:

01.02.2024-29.02.2024թթ. ժամանակահատվածի համար այլ վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը «Ա» և «Բ» գոտիներում կայանելու համար համապատասխան եկամտային հաշիվներին փոխանցվել է ընդամենը 122.685.000 ՀՀ դրամ գումար: «Ա» գոտում կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է շուրջ՝ 473, ամսական դրույքաչափով շուրջ՝ 1268, շաբաթական՝ շուրջ 889 և օրական՝ շուրջ 2493 ավտոտրանսպորտային միջոցների համար վճարումներ: «Բ» գոտում կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է շուրջ՝ 3615, ամսական՝ 255, շաբաթական՝ շուրջ 69 և օրական՝ շուրջ 410 ավտոտրանսպորտային միջոցների համար վճարումներ:

Համաձայն Երևանի ավագանու 26.12.2023 թվականի հ.43-Ն որոշման՝ ներկայացված տարեկան, ամսական, շաբաթական և օրական վճարումներում ներառվել է նաև 27.12.2023-31.12.2023թթ. ժամանակահատվածում համապատասխան եկամտային հաշիվներին կատարված վճարումները:

Հաղորդագրություններով կատարված վճարումների մասով տեղեկատվություն հնարավոր կլինի տրամադրել օպերատորների հետ համապատասխան ճշգրտումներն ավարտելուց հետո:

Տեղեկացվում է, որ տարեկան դրույքաչափին համարժեք 2023 թվականի հունվարին համապատասխան եկամտային հաշիվներին կատարվել է 376.680.000

ՀՀ դրամ, իսկ փետրվար ամսին 63.372.000ՀՀ դրամ գումարների փոխանցում: Ժամավճարների դրույքաչափին համարժեք (ըստ գանձապետական մուտքերի) 2023 թվականի հունվարին առկա է 14.846.500 ՀՀ դրամ, իսկ 2023 թվականի փետրվարին 9.010.000 ՀՀ դրամ գումարների փոխանցում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ